

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՅՈՒ ՏԱՂԵՐԸ

Դ.

ՏԵՐ ՍԻՄԷՕՆ ԵՐԵՅՈՒՆ Է

Պնդոսական ծովեզերեայ
վառնայ անուն ֆաղաֆ մի կայ,
անդ ֆահանայ գոմբն տեսայ,
Տէր Սիմէօն անուանի նայ:

Կերպիւ պարկեշտ նա ճեւանայ,
որպէս թէ չունի մահանայ,
իմաստնաձեւ բայց անիմայ,
գորպիսութիւնն ասեմ հիմայ:

Ով որ նըմա հիւր լինենայ
թէ վարդապետ կամ ֆահանայ,
կարգ մեռեոց գնա իմանայ,
զի ֆան զմեռեալ է անգգայ:

Ընդ արշալոյսն երբ լուսանայ,
եղև ժամուն թողնու գնայ,
գնաշն եւ զընթրիսըն մոռանայ,
մինչ յիբրիկուն յայլ տեղ շուրջ
գայ:

Յեկեղեցին ոչ երեսայ,
եւ գեկեալ հիւրսն ոչ խղնայ,
թէ ի՞նչ կերան այսօր նոֆա
կամ անօթի, եւ ջուր չիկայ:

Երբ իրիկուն ժամէն ելայ,
ի սեղանում չի հեռանայ,
կարծես առեալ ակն ունի նա
թէ կու գտնեմ հազըր յօխմա:

Հարցանողին հուղապ չի տար,
թէ ո՞ւր էր նա, կամ ուստի՞

գայ,
ի չորեք դին աչվին ժուռ գայ,
թէ մեծ գաւաթն ե՞րբ առ իս
գայ:

Զինչ որ գտնու սիրով կու տայ,
եւ մքընծեծ առնէ ըզ նա,
յիւր ֆակէն փող մի չելլայ,
Այլոց հացի մոշքալս է նա:

Զականջն ի կալս ձըգէ շուռ գայ
թէ զի՞նչ պատիւ մարդոց լինայ,
գորն ի բուն անօթի մընայ
որ լաւ ուտէ եւ կըշտանայ:

Երբ ըզփորլից գառըն տեսնայ
հոգւով մարմնով ուրախանայ,
առանց ծամել զինքն կու տայ
երկու երեք, չորս հինգ օխայ:

Փարջ մ'ալ գինի կէս սուլումայ
Գառան մսին վրայ շուռ տայ,
Հապա երեսըն ծաղր գայ,
Հանգչի հոգին եւ դուրանայ:

Ով որ կամի պատուել ըզնա,
երկու երեք գառ ունենայ,
զապու փիլաւ եւ հերիսայ,
չորս հինգ խալխան պալըլս
չօրպայ:

Բեռ մի սապղի կանանչ մէգայ,
թառկուն մասուլ կծու թառայ,
ուռու տերեւ խառն լինայ,
Որ գկերակուրն մարսել տայ:

Մի՛ մեղադրէ՛ք Մարտիրոսին
թէ կարնաօտ ասիր գդայ,
Զո՛րըն գրեցի, գո՛րըն մոռցայ
եւ զվնացեալքն տեսցուք յապայ:

Անմեղադիր թող մեզ լինայ,
Տէր Սիմէօն որ ի վառնայ,
կէսըն էր յըզորդ, կէսըն շախայ
Աստուած իւրեանն նիսափ տայ:

ՍԻՂԻՍԹՐԻՑԻ ՅԱԿՈԲ ԻՐԻՑՈՒՆ ՊԱՐՍԱԻԱՆԱՆՔՆ Է

Ե.

Եղբարք եկե՛ք ձեզ բան ասեմ,
ականջ դրե՛ք ամենեքին,
քե՛զ զի՛նչ բաներ եղայ պէյան
Սիլիսթրէցի Տէր Յակոբին:

Հագար հարիւր քսան ւերկու
ագգիս հայոց քուսկանին,
Նե՛ծի աւուր նրազայուցին,
Սուրբ Յարութեան յերեկոյին:

Իրեանց մէջըն սահման մի կայր
յաւուր իրիկուան Նաւակատկին
կերակրեղէնք եւ ըմպելիք,
յեկեղեցին պատրաստէին:

Մեղրով շինած փախլավաներ,
զըրախուն լաւըն բերէին,
յեր պատարագն որ արձակէր,
մեծի փոքրի բաժանէին:

Այնպէս արին եւ այս տարիս,
գոր ինչ սահմանք որ ունէին,
վարդապետ մի հանդիպեցաւ,
իսկի խաբար չէր այն բանին:

Վերակացուքն որ անդ կային,
վարդապետին հանին բաժին,
ըգծոնելի լաւ դումդումէն,
փախլավայի մեծկակ սինին:

Երբ մեծ երէցըն գայն լսեց,
Գնաց զինչ խելք որ կայր գլխին
ասէ բերե՛ք որ ես պահեմ,
տանիմ սեղան վարդապետին:

Այն միամիտ վերակացուքն,
հաւատացին նորա սըտին,
քե՛տ տէրտէրըն սուտ չի խօսիր,
աւագերէց տէր մըղտէսին:

Բերին զարուխն եւ զփախլավան,
մեծ երկցուն քէպիմ արին,
եւ նա առեալ եղիր տօլապն,
մինչեւ հանցէ զգգեստ անձինն:

Բանգի նախ ինքն է ժամարար,
ձեռըն քաթախ սուրբ խորհըր-
դին,
շուտով ձգեց զըզգեստն ի վար,
դող էր ելեր ոտվին ձեռվին:

Թէ ե՛րբ կարեմ տանել ի տուն,
մարդ չի տեսնէ մութն ի մըքին
մէկ օր չի կայր որ գայն գող-
նայր:

Իրեշտակք ի վեր զարմանային:

Գայ ի սեղան բագմի յընթրիս,
որպէս Յուդա նենգն ի սըտին,
ասէ իսկի մարդ չիմացաւ,
ուրախանայր ի յիւր մըտին:

Թէ զփախլավան հետ արախտուն,
որ քագուցի տեղուջ մըքին,
այս գիշերվան բանըն բուսաւ,
վաղէն հերիք է ինձ բաժին:

Յերբ առաւօտըն լուսացաւ,
աւարտ եղաւ պատարագին,
եկին բերողքն կերակրոց,
հարցին զոլայն ու մեծ սինին:

Այս բաներուս մարդ չէ խապար,
ոչ փոքրաւորք վարդապետին,
ասին քե՛տ մեք ոչ եմ տեսեալ,
ոչ փախլաւան, ոչ արախտին:

Նոքա լուեալ աղմըկեցին,
տընէ ի տուն հարցմունք արին,
եւա տունէն մեծ տէրտէրին,
այն մըղտեսին տէր Յակոբին:

Քաղաք ամեն գայս իմացաւ,
եւս առաւել ծեր պառվըտին,
այն մահադեղ լինի նորա,
ամենեքեան գայն ասացին:

Միարեւրան տուին անէծք,
մեծ երկցուն եւ իւր փեսին,
նա ի՞նչ արժան էր այնպիսուն,
թող չօռ խըմէր. հաշկի որդին:

Ձայնըն հնչեալ տաքածեցաւ,
ամենեքեան զայն լսեցին,
քէ տեղացիք կամ մուռփիք,
վանառականք որք ի խանին:

Ով որ լըսեց ասաց նալաք.
գեխած նեխած այն մառեօլին,
գխախկուքիւնն ի միտ բերեալ,
յոյժ զարմացեալ հեռանային:

Ով սիրելիք ի միտ ածէք,
գեղեալ բաներս որ ձեզ պատմեն
ագահըն չէ աստուածապաշտ,
այլ է ծառայ պիղծ որկորին:

Եթէ բանիս վրայ խնդրես,
կարդայ՝ զգիրսըն Պօղոսին,,
վա՛յ եւ եղուկ տայ այնպիսուն,
քէ քշնամի է սուրբ խաչին:

Եօթըն մահու գրեալ մեղացն,
գերեքն ունի իւրըն բաժին,
զի որկրամուն է եւ ագահ,
որք են ծնող բղջախոհին:

Իսկ մեք զբանս աւարտեցուք,
այս բաւական է գիտցողին,
ո՛վ որ ագահ է եւ Մառեօլ,
հազար նալաք իւր երեսին:

Ինչ քահանայ որ ագահ է
խորէ գրածին վարդապետին,
նա բորոտի զինչ Գէեզի,
զինքն անիծէ Աստուած Հոգին:

Աստուած օրհնէ գժողովուրդն,
եւ գտանտիկնայքն ի միասին,
զԱստուածասէր եւ գողորմած
բարեբարոյ ծեր պառվընին:

Թէ շատ քէ քիչ զինչ որ եփին,
բաժին հանեն վարդապետին,
իւղով մեղրով շինած գաթայք
եւ չոր մսիկ պաշար նամբին:

Ինքն փրկի յամեն չարէ,
Աստուած պահէ գոուստրն եւ
գորդին,
եւ յետ աստիացս ելանելոյ,
յարբայութեան հանգչի հոգին:

2.

ԲԱՆՔԻ ԾԱՂՐԱԾՈՒՔ ԳՐԵԱԼ Ի ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ

ԱՌ ԲԱՐԵԿԱՄՍ ԻՐԻ

Ով սիրելիք պարոն խոնայք,
մեր հարըն ձեզ մնաց եղբարք,
էանց գարնան լաւ ժամանակ,
ահա՛ յամռան կէտըն հասանք:

Պաղչին ծառերըն ծաղկեցան,
Ծաղիկքն ելեալ պտուղ հասան,
վարդ ու շուշան քառամեցան,
վայելչութիւնք ծաղկանց անցան:

Կանանչ պարտէզ, խիար, պօստան
սեխ եւ դդում եւ բաքլիման,
տուեալ պտուղ եկին ի համ,
զբուռչին կերաք երեք անգամ:

Ծառոց մրգերն եկին ի հաս,
տանձ ու սալոք, ծիրան ինճաս,
ընկուզն ու նուշն են կիսահաս,
մեր սրտիկն է բորբոս ու փաս:

Գորտերուն ձայնըն կտրեցաւ,
երգ պըլպուլաց խափանեցաւ,
ծէք մոծակաց խայթըն սըվաւ,
ձայն գոռեխից յոյժ զօրացաւ:

Վհարեցաք զինչ կայր բըսակ,
մանր խոշոր քէ մին ըստակ,
արտ մի բակլայ կանանչ կերաք,
քող զբագուկն ու կարմիր տակ:

Այժմ քաղեմք խելար խոտեր,
կուտայ յիւրմէն գէշ գէշ հոտեր,
Արգըրումցին սիրով ուտէր,
հիւանդացաւ կասէր, ա՛խ մէր:

Զմեզ ձգեցիք տեղ մը ետպուն,
ոչխար չունինք լինանք չօպան,
գայլերն եղին մեզ պահապան,
դէմ փէննիքին կանգնին օռնան:

Հար մի տեսէք մեզ ելելու,
գնանք թուրքին մենք գնալու,
այլ մար չունինք աստ կենալու,
փող չի մնաց հացի տալու:

Պարտօք հաց չի տար էփմէֆին,
դրամ կուզէ մէյլսանէին,
խիար ծախող մեր պօստանին,
մեզնէ կառնու գին խաւարին:

Ամռան շողերը գօրացաւ,
գօրն ի բուն մեղինք թագնապաւ,
հորերուն ջուրն ալ կէս եղաւ,
վախինք կտրի մնանք ծարաւ:

Աղաչեցէք առ Տէր Քրիստոս,
մի ողորմի հանէ նոտոս,
վարդավառըն ձեզ բարեխօս,
մեզ խղնացէք մի՛ թողուք հոս:

Մեզ մէկ ամիս վատայ դըրիք,
գերկուսն անցաւ՝ չասիք հերիք,
վասն Աստուծոյ ով սիրելիք,
մեր գանգատին արէք մըտիկ:

Նախնի մըրգերն ամէն հատաւ,
կարգն ի խաղողն եւ թուրն եկաւ,
մեծ հաւուզի ջուրն ալ հատաւ,
չուլ ու խարար գինչ կայր փրտաւ:

Զայն մեղուքինս որ կրեցաք,
գամենըն առ ձեզ գըրեցաք,
յուլիս ամիսն այլ կիսեցաք,
հացէ ջրէ ալ կըտրեցաք:

Այս բաներուն մի՛ տրտնջէք,
տէրտու սէօյլեր, լաւ կու գիտէք
երբ այդչափ մեզ մոռացեր էք,
գաղ ու հացըն հէլալ արէք:

Է.

Ի ՎԵՐԱՅ ՅԱԿՈԲ ԵՐԻՑՈՒՆ ԷՏԻՐՆԵՑՈՒՆ

Նախնի հարանց մեր ընտրելոց,
պատէր ունիմք հաստատական
վատարախտին գրել պարսաւ,
եւ գեղեցկաց տալ գովասան:

Եւ ոչ ասե՛ չարին բարի,
գլխաւարըն լոյս որ չէ արժան,
այլ գբարւոյն լաւ վկայել,
վատքարն չար ասել գրեցաւ:

Որպէս եւ այս բան շարադրի,
յաղագս ումեմն Յակոբ անուան
որ այժմ երէց վերաճայնի,
յԱնտրիանու կոչեալ պօլսեան:

Ոչ ի յագգէ ընտիր արանց,
այլ ի յետնոցն որ անըջան,
վասն այն որիկ ի յետիրնու,
գնաց Ըստամպօլ վտարական:

Եւ անդ երէց նա ձեռնադրի,
ոչ ըստ իւրոյն արժանութեան,
այլ ըստ բերման ժամանակին,
դիպի երբեմն որ չէ արժան:

Որպէս յաթոռըն Մովսիսեան,
դպրաց նստիլ Փրկչին է բան,
կամ չէ առակըն խոտելի,
բու յաւերակարն արժուանան:

Անդ ժամանակ մի շըրջմըրջկի,
մինչ ի Եանդունն Ըստամպօլայն
պատրիարքէն գիր մի առնու,
որ Մարտիրոսն էր Ղըրիմայն:

Այնու գրով գայ յետիրնէ,
առ պարօն տէրըն Տէր Յօհան,
նա ընդունի գնա սիրով,
պատրիարքին գըրուն փոխան:

Յետ այնորիկ նա գիրանայ,
ըստուարանայ գոր գրեալ կան,
ըզվարդապետն այլ ոչ յիշէ,
եւ ոչ զվէհն Տէր Յօհան:

Ապա գրնայ յերուսաղէմ,
մահտետութեան ցանկայ անն-
ուան,
ուր որ նըստի փառամոլի,
թէ այս պատուոյս խիստ եմ ար-
ժան:

Հպարտութեամբ է ուռուցեալ,
վայրենամիտ լ'ամբարտաւան,
ի յարծաթոյ հարեալ ի սէր,
մոլեալ ի յախտն անյագութեան

Մէջ երիցանց դիվան կառնէ,
շաբաթն երկու երեք անգամ,
ասէ եկայք տըվէք համար,
թէ ո՞րչափ էր շաբթոս զուր-
պան:

Եօթն ութ երի ինն է հասեր,
ո՞ւր է չկայ մորթն ու փաշան,
ժամկոչներուն երդումն տայ,
թէ ձեր կերածն եղնայ հարամ:

Մեռելիքադի գլուխ չունի,
գէրէ հեռու է գերեզման,
թէ խիստ նեղեն կը հայհոյէ,
զպատմառ եղօղըն նախնական:

Ժամրարութիւնըն կը սիրէ,
թէ գփառոսնիցն ամէն իւր տան,
եւս առաւել գհոգւոյ մատաղն,
գծածուկ յիշբքըն պաշտաման:

Թէ աղփատաց մահ հանդիպի,
կամ թէ ձայնին Հաղորդու-
թեան,
ոտ վիզ կոտրի ոտքըն բեկի,
շուտով յեմու ի գաւազան:

Շաբաթն ի բուն ժամ չի գնար,
թէ այս օրերս չեն ինն արժան,
կիրակմբտին շփեղազարդ,
գնայ կանգնի Բելայ նըման:

Որ ըզծըխերն հաւընցընէ,
թէ՛ Լոյս գուարթ ասաց տէրան,
եւս առաւել առաւօտուն
որ ընթեռնու գԱւետարան:

Բերկրեալ սրտիւ գուարնանայ,
երբ որ լսէ հարսանեաց ձայն,
յառաջագահ բազմի յընթրիս,
որպէս պատմէ Աւետարան:

Ասէ զի՞նչ տայք Հալաւ օրհնէք,
յետոյ տեսնանք պսակադրամ,
ըզտասանորդըն սագուին,
թեմին կառնում կամ սաղ դրամ

Եւ թէ ասեն կէս մի օժտէ,
ձեռնովն սօքտէ կանգնի մէյտան
Ատուած փրկէ տէրն ազատէ,
նէնկ ու կոխ մէտէք աման:

Պակաս չառնու երկու պըլիկ,
ըռգակ ծախող չարչու նըման,
կանչէ նընչէ գիշերն ի բուն,
մինչեւ իւր կամբքն լինինան:

Երբ տընօրհնէքըն մօտենայ,
տօնի գատկի սուրբ Յարութեան
գերիցանին նա խոշտանկէ,
սաստէ բանիւ ըսպառնական:

Ո՛վ նորընծայ փռք իրիցունք,
գգոյշ յերուք ամենեքեան,
տընօրհնէքի հետ բան չունիք,
չասէք թէ մեր՝ կամ ազգական:

Բանգի ամենն ինն է տուեալ,
թէ տեղացիք թէ պագիրկեան,
եւ ո՛ւմ կամիւ կուտամ ըզնա,
որպէս ասաց պիղծ սատանան:

Խիստ անզգամ չար եւ ըռիշտ,
խսկի չունի բարւոյ նըշան,
յամենեցունց է ատելի,
մէկ մի չըկայ իւրեան հաւան:

Աղփատ է կոյրք եւ մուրացկան,
թէ պատահին սորա դըրան,
անիծելով դառնան ի յետ,
անողորմի դըրան նըման:

Յերբ որ աղփատ մի դէմն ելնէ,
դժուարանայ գտեսըն միայն,
գդէմքն իբրեւ պնդէ գերկաք,
առնէ տրտունջս դիւական:

Թէ գօրն ի բուն աղաղակէ,
նա չի տանի գձեռն ի ֆէսան,
գերկու փողքն լաւ կու սիրէ,
ֆան գդրախտն եղեմական:

Զո՞րն ասացից գո՞րն քողից,
որ չունի մաս մը բարութիւն,
ցամաք ջրհոր եւ չոր աղբիւր,
կամ աղտաղտուկ ջուր դառ-
նահամ:

Զնախանձն անչափ ունի հոգին,
լի է ախտիւք սրտմըտական,
եւ ծոյլ բնաւ առ ի բարին,
գագահութիւն անքուական:

Զմասըն վերջին անյիշելի,
եւ նա ծնունդ իսկ է սոցայն,
սա եօթնեֆին մասամբ վատքար
աստ եւ ի կեանս քշուառական:

Առ նա խօսէ ըսպառնական,
Տեսառն մերոյ օրհնեալ հրա-
ման,
քէ ե՛րբ ի հուրն յաւիտեանական
որ է ի դիւաց պատրաստական,

Զի ոչ ետուր հաց ֆաղցելոց,
չեղեր հիւրոց ասպընջական,
գծարաւին ոչ արբուցեր,
ոչ հիւանդաց եղեր պաշտպան:

Բանդարգելոց ոչ մերձեցար,
որ անհրաժեշտ իմ էր հրաման,
որպէս որ դու իմաց չետուր,
եղես յիմոյս արֆայութեան:

Այս է նորա մասն ու բաժին,
վերջին բաժակըն դառնութեան
արբցէ գմբուրքն դժոխաց,
որպէս Դաւիթ գրէ զայս բան:

Գրիչաճնունդ բանս աստանօր,
արտայայտեալ ի շար եդան,
Մարտիրոսէ Ղրիմեցւոյ,
առ որ գրեցաւ խիստ էր ար-
ժան:

Ը.

Ի ՎԵՐԱՅ ՊՈՒՐՂԱԶՈՒ

(Ռ Ճ Ի Գ - (1674), յունվարի Ժէ)

1. Պուրղա՛գ դու հիմանց ֆանդիս, ֆու շինուածքդ ամեն կործանի,
աւեր ու անտիրունչ մնաս, դու նման Սողոմ ֆաղափի:
2. Զուրդ դառնահամ եւ գորշ համեմատ ծովու է լեղի,
չունիս բարութեան նշան, յամենայն իրաց ամայի:
3. Բնակիչ քո չար եւ դժնեայ, նմանին որդւոյն Քամի,
հիւրընկալութիւն չունին, զինչ Սողոմն՝ որ նոր ասացի:
4. Կէս մի սովամահ լինին, կէսն այլ գայ գրողն ու տանի,
եւ այլքն երերուն մնան, դողդոջեալ նման Կայէնին:
5. Յաւօք տագնապին յաւէտ, տենդոտին վշտօք ջերմանի,
չիք ու չֆաւոր դառնան, որ չունին սէր ընդ օտարի:
6. Այգիքն ի խոպան դառնան, փուշ բուցի փոխան խաղողի,
ողկոյց դառնութեան ծնցեն, զինչ գրեաց Մովսէս ի գրի:

7. Քանզի անողորմ են խիստ, մոաֆաղ առնեն զայգի,
նչ քոչնոց բաժին քողուն, ոչ ողկոյզ մի տան օտարի:
8. Ի մէջ Ադամայ որդոց, չէ տեսեալ սոցա նմանի,
անգութ եւ օտարատեաց, դժնէադէմ եւ խիստ գարշելի:
9. Զջուրն ի հորոյ ըմպեն, օտարին չտան կաթիլ մի,
միթէ ակն արեան բղխէ, եգիպտեայ գետոյն նմանի:
10. Մարտիրոս հերիք արա՛, մի՛ չափեր չար փոխան չարի,
օրհնեայ զանիծիչն քոյ, աշակերտեայ դու Յիսուսի:

*
**

Թ.

Ի ՎԵՐԱՅ ԱՀԵՈԼՈՒ ՏԻՐԱՑՈՒԻՆ

Բայց դու գայս ծանի՛ր Տիրացու Նիկոյ,
'անուն քաղաքիդ՝ որ կոչի Ահեօլ,
հաց ու կեր չունի, միայն ջուրն է պօլ,
վերջըն տի մնայ խարապայ եւ չէօլ:

Քաղաք անուանիք զգեղդ աւերակ,
յամենայն բարեաց է ինքն ցամաք,
որոյ են բնակիչք չարք ու դժընդակք,
ստեցօղք միմեանց, իրերաց՝ մերհակ:

Իւրեանց գառօրեայ կեանքն երերմնի,
ժամ աղօթք չունին շաբաթն ոչ օր մի,
կից կից ափ ալիւր՝ փոխարկեն աշի,
կիսախստոն զջուրն ծախեն քէ՛ գինի:

Ընտէ՞ր գորն ի բուն ձրի խօսիք սուտ,
յերբ չունիք այտի ձեզ շահ եւ օգուտ,
բարձէ՛ք ի տեղոյդ գոյս եւ ումուտ,
արարէ՛ք այտի գփախուստ ձեր շուտ:

(վերջ)

